ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«—» ապրիլի 2011թ. N-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՇՏԱՐԱԿԻ ԽՃՈՒՂՈՒՆ ՀԱՐՈՂ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԹԱՂԱՄԱՍԸ «ՎԱՀԱԳՆԻ» ԹԱՂԱՄԱՍ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29–ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին՝ հ.2387–Ն որոշումը և «Հովնանյան Ինտերնեյշնլ» ՍՊԸ–ի 14.03.2011թ. հ.30 գրությունը՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Աշտարակի խճուղուն հարող նորակառույց թաղամասն անվանակոչել «Վահագնի» թաղամաս:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԱՇՏԱՐԱԿԻ ԽՃՈՒՂՈՒՆ ՀԱՐՈՂ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԹԱՂԱՄԱՍԸ «ՎԱՀԱԳՆԻ» ԹԱՂԱՄԱՍ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման համար հիմք է հանդիսանում «Հովնանյան Ինտերնեյշնլ» ՍՊԸ–ի միջնորդությունն Աշտարակի խճուղուն հարող նորաստեղծ թաղամասը «Վահագնի» թաղամաս անվանակոչելու վերաբերյալ:

Համաձայն ՍՊԸ–ի կողմից ներկայացրած տեղեկատվության՝ թաղամասն ընդգրկում է 162,24հա տարածք՝ շուրջ 200 առանձնատներով: Բնակչության թիվը հասնում է 300–ի:

Թաղամասի անվանակոչության անհրաժեշտությունն անմիջականորեն կապ ունի փոստային առաքման, հասցեավորման և այլ ծառայությունների սպասարկման հետ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՇՏԱՐԱԿԻ ԽՃՈՒՂՈՒՆ ՀԱՐՈՂ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԹԱՂԱՄԱՍԸ «ՎԱՀԱԳՆԻ» ԹԱՂԱՄԱՍ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Աշտարակի խճուղուն հարող նորաստեղծ թաղամասը «Վահագնի» թաղամաս անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման կամ այլ որոշումներում լրացումներ և /կամ/ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ